ՄԵԾԵՐՈՑ ՏԷՐ.

Յոբելենական Ցանձնաժողովը կարևոր համարեց Մեծ Յոբելեանի փակման տօնին խորհրդակցութիւն ունենալ մեր ուղղագրութեան խնդրի մասին, որ տարիներէ իվեր արծարծուում է մեր մամուլի մէջ։ Նկատի ունենալով անհրաժեշտութիւնը մեր ուղղագրութեան միակերպութեան, որ հետզհետէ դժբախտաբար աւելի ու աւելի խանդարուում է, կը խնդրէինք, Մեծ. Պարոն, որ հաճէիք ներկայ լինել այդ խորհրդակցութեանը։ Իսկ եթէ չէք կարող հոկտ. 12-ին Էջմիածնում լինել, խնդրում ենք Ձեր կարծիքն ուղարկել, թէ արդեօք պէտք է և կարելի՞ է մեր ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մտցնել։ Հաճեցէք նաև ի նկատի ունենալ, որ կարելի է առաջարկուած բոլոր հարցերին չպատասխանել, ինչպէս նաև այլ նոր հարցեր արծարծել և պատասխանել։ Շատ կը պարտաւորեցնէիք մեզ, եթէ պատասխանէիք ներքևում դրած հարցերին նոյնիսկ այդ դէպքում, երբ հնարաւոր չի լինի հասցնել պատասխանները մինչև յոբելենական հանդէսները. որովհետև Յոբելենական Ցանձնաժողովը մտադիր է իւր ժողոված բոլոր նիւթերը յանձնել ս. Էջմիածնի ուսումնարանական Ցանձնաժողովին՝ կարծիքները ամփոփելու և եզրակացութիւնը գործնական նպատակների ծառայեցնելու համար։

I Եթէ Ձեր կարծիքով պէտք չէ և կարելի չէ փոփոխութիւն մտցնել մեր ուղղագրութեան մէջ, կը խնդրէինք պատասխանել հետևեալ հարցերին.

1. Ինչո՞ւ պէտք չէ և կարելի չէ այդ անել։

2. Ի՞նչ կարծիք ունիք ուղղագրութեան միութեան մասին։

3. Ի՞նչից է առաջանում մեր ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելու ձգտումը, որով ուղղագրութեան խնդիրը շարունակ արծարծւում է և հետզհետէ նորանոր փոփոխութիւնների ենթարկւում։

4. Ի՞նչպէս պիտի վերաբերուել մեր ուղղագրութեան մէջ հետզհետէ մտնող նորանոր փոփոխութիւններին. արդեօք պիտի թողնել ազատ, թէ՞ պէտք է և կարելի է որևէ ձևով որոշ ուղղութիւն տալ այդ ձգտումներին, կամ դրանց առաջն առնել յանուն ուղղագրութեան միակերպութեան։ Եւ եթէ կարելի է և պէտք է այդ անել, ո՞վ և ի՞նչպէս պէտք է անի։

5. Եթէ անհրաժեշտ է միակերպ ուղղագրութիւնը, հարկաւոր չէ՞ արդեօք միակերպութեան վերածել տատանուող ուղղագրական ձևերը (թանկ-թանգ, գունտ-գունդ, վաղճան-վախճան, ծնօղ-ծնող և շատ նմանները). ի՞նչպէս պէտք է ընտրութիւն անել այդպիսի բառերի գրութեան մէջ։

6. Ի՞նչպէս պիտի վերաբերուել առանձնապէս վ հնչիւնի վ, ւ, ու նշանագրերով ոչ միակերպ ուղղագրական ձևերին (ասուել, ասւել, ասվել)։ Արդեօք պիտի թողնել այդ տարբեր գրութիւնները, թէ՞ պէտք է և կարելի է այժմ ուղղագրութիւնն այդ մասին միակերպութեան վերածել, և ի՞նչպէս։

7. Ունե՞նք արդեօք մեր գրական լեզուի մէջ երկու տարբեր հնչիւն վ բաղաձայնի համար, ինչպէս կարծում են, մէկը կոշտ վ (ծով) միւսը փափուկ ւ (հաւ), թէ՞ դա լոկ սխալ հասկացողութիւն է, և մենք միայն մի վ հնչիւն ունինք, և վագել, կով, աւազ, հաւ բառերի մէջ նոյն վ հնչիւնն է, գրութեան ձևով միայն տարբեր։ Արդեօք վ հնչիւնն ունեցող ու-ն՝ պատուէր, զուարթ և նման գրութիւնների մէջ կիսաձայն ու է (բաղաձայնական ու ձայնաւոր), թէ՞ բաղաձայն՝ վ հնչիւնով։

II Եթէ Ձեր կարծիքով պէտք է և կարելի է փոփոխութիւններ մտցնել մեր ուղղագրութեան մէջ, կը խնդրէինք պատասխանել վերևում դրած հարցերի հետ (բացի առաջինից) նաև հետևեալներին.

1. Ինչու՞ պէտք է փոփոխութիւն մտցնել։

2. Արդեօք ճիշտ է այն կարծիքը, թէ ուրիշ ազգերը փոփոխութիւններ չեն մտցրել և չեն մտցնում իրենց գժուար ուղղագրութեան մէջ։ Ո՞րչափ արժէք կարող են ունենալ մեզ համար այն հիմունքները, որոնցով առաջնորդւում են ուրիշ ազգերն իրենց լեզուի ուղղագրութեան մէջ փոփոխութիւն մտցնելու նկատմամբ։

3. Ի՞նչն է պատմականօրէն անփոփոխ մնացել մեր ուղղագրութեան մէջ, և ի՞նչը փոփոխութեան ենթակայ է եղել և է։

4. Ո՞րչափով կարևոր և հնարաւոր է մեր ուղղագրութիւնը մօտեցնել արտասանութեանը։

5. Մինչև ո՞ր աստիճան՝ տեղական արտասանութիւններն արգելք կը լինին ուղղագրութիւնն արտասանութեանը մօտեցնելուն։ Կա՞յ արդեօք ընդհանուր գրական արտասանութիւն որոշ տառերի համար, որոնց ուղղագրութիւնը դժուարութիւն է պատճառում։

6. Ո՞րչափ ճիշտ է այն կարծիքը, թէ որևէ փոփոխութիւն մեր ուղղագրութեան մէջ՝ պատճառ կըլինի ամբողջ ուղղագրութեան տակնու

9. Ա.) Կարելի՞ է արդեօք է տառը դուրս ձգել և է-ի տեղ միշտ ե տառը գրել։ Բ) Եթէ այդ կարելի չէ, կարելի՞ է արդեօք՝ պահելով բառերի սկզբի է տառը՝ բառերի մէջը և վերջը է-ի տող ե գրել։ Ո՞րքան արդեալք կարող է լինել այս փոփոխութեանը է-ով գրւող բառերի ստուգաբանութիւնը։ Գ) Եթէ այդ էլ կարելի չէ, կարելի՞ է արդեօք է տառը պահել բառերի սկզբում և այն դէպքերի համար, որոնց մէջ է-ն բառակազմութեան ժամանակ փոխւում է ի հնչիւնի. իսկ մնացած դէպքերում գրել ե տառով։ Դ) Եթէ այդ էլ կարելի չէ, կարելի՞ է արդեօք է տառը պահել բառերի սկզբում, վերջում, մէջը ձայնաւորից առաջ, բայերի վերջաւորութիւնների մէջ (գրէք, գրեցէք, գրէր) և այն դէպքերում, երբ է-ն փոխւում է ի հնչիւնի. իսկ մնացած դէպքերում գրել ե տառով փոխանակ է-ի (եղեգն, աղուես, գմբեթ, պատճեն, ծակոտկեն և այն)։ Ո՞րքան դիւրութիւն առաջ կը գար այս վերջին փոփոխութեամբ և ո՞րքան շատ բառերի պատկեր կը փոխուէր։

10. Կարելի՞ է արդեօք յ տառը պահել միայն կիսաձայնի համար ա և ո ձայնաւորներից յետոյ, իսկ բառերի սկզբի յ-ի տեղ գրել հ տառը և բառերի վերջի անձայն յ տառը դուրս ձգել։ Եթէ այդ կարելի չէ, կարելի՞ է արդեօք պահելով բառասկզբի յ-երը, բառավերջի անձայն յ-երը դուրս ձգել։ Ո՞րքան դիւրութիւն կը լինէր դրանով և ո՞րքան կը փոխուէր բառերի պատկերը։

11. Կարելի՞ է արդեօք այժմ եա, եօ, իւ, ոյ (լոյս) երկբարբառների գրութեան մէջ փոփոխութիւն մտցնել։

ՅՈԲԵԼԵՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1913 թ. սեպտեմբեր
ս. Էջմիածին։

---

* Այս հարցացուցակը կազմել է յոբելենական Յանձնաժողովի անդամ պ. Մ. ԱԲԵՂԵԱՆԸ Յանձնաժողովի յանձնարարութեամբ։

Մեծարոյ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ բարեհաճ տնօրէնութեամբ՝ ս. Էջմիածնի կեդրոնական Յոբելենական Յանձնաժողովս պատիւ ունի խնդրել Ձեզ, Մ. Տ., որ հաճիք մասնակցել ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐԻՆ, որոնք տեղի պիտի ունենան ս. Էջմիածնում տարւոյս հոկտեմբերի 12, 13 և 14-ին։

Ներկայացուցիչ ուղարկելու դէպքում՝ խնդրւում է նախօրօք յայտնել Յանձնաժողովիս։

Նախագահ Յոբելենական Յանձնաժողովի՝

ԳԱԼՈՒՍՏ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆ

Անդամ-Քարտուղար՝ ԳԷՈՐԳ ՎԱՐԴ. ՉԷՕՐԷՔՉԵԱՆ

ՄԵԾԱՐՈՅ

ՏԷՐ ԽՄԲԱԳԻՐ,

Հաճեցէք պատուական թերթիդ մերձակայ համարներից մէկում զետեղել հետեւեալը.

Ս. Էջմիածնի Յոբելենական Յանձնաժողովը խնդրում է այն բոլոր հեղինակներին, որոնք գրերի գիւտի կամ տպագրութեան յոբելեաններին նուիրած որ և է աշխատութիւն ունին՝ հաճել մի-մի օրինակ ուղարկել Յանձնաժողովիս հետեւեալ հասցէով. Эчміадзинъ, Предсѣдателю центральнаго Юбилейнаго Комитета армянскаго альфавита и печати.

Յոբելեանների յիշատակը յաւերժացնելու համար շնորհակալութեամբ ընդունւում են նկարներ, ձեռագրեր, հնութիւններ և առհասարակ ամեն տեսակ նուէրներ։

Նախագահ Յոբելենական Յանձնաժողովի՝

ԳԱԼՈՒՍՏ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆ

Անդամ-Քարտուղար՝

ԳԷՈՐԳ ՎԱՐԴ. ՉԷՕՐԷՔՉԵԱՆ

8/IX 1913 թ.

Ս. Էջմիածին.